ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Բաճկոնը կանաչ գույնի կիսաբրդյա կտորից է, մետաքսե աստառով, կտորի երանգը՝ համաձայնեցվում է Գնորդի հետ: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ, 54% պոլիէստեր, 2% լայկրա, կտորի խտությունը՝ 235 գրամ մ2, թույլատրելի շեղումը համաձայն ԳՈՍՏ-ի: Բաճկոնը բաղկացած է մեջքից, օձիքից, թևքերից և լանջափեշերից, որոնք միացվում են շղթայով: Բաճկոնը առաջամասից կրկնակարվում է սոսնձապատ գործվածքով: Առանձին հատվածները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձապատ գործվածքով: Կրծքամասի երկու կողմերում տեղադրված են կպչունակով կոճկվող, ուղղանկյուն կափույրով արտաքին գրպաններ: Փեշամասում տեղադրված են ներկարված շղթայով կոճկվող երկու թեք գրպաններ: Մեջքը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ միակար թեզանիքներով և կտրվածքով: Թեզանիքները կոճկվում են երկու մետաղական ոսկեգույն կոճակով: Բաճկոնը գոտիով է, կողքերից՝ էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ ոսկեգույն կոճակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Տաբատը նույն բաճկոնի կտորից է՝ կողային երկու ներկարված գրպանով, հետևի մասում ունի մեկ գրպան՝ կափույրով: Տաբատն առջևի մասում կոճկվում է կայծակաճարմանդով: Տաբատը կողքերին ունի մեկ նեղ (2 մմ) կարմիր գունաժապավեն: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	